ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հայոց լեզվի և գրականության դասերին»

Հեղինակ՝ Արմենուհի Հայրապետյան

Դպրոց՝ Սյունիքի մարզի Խնձորեսկի Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Ղեկավար՝ Գոհարիկ Մկրտչյան

Գորիս 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն----------
2. ԳԼՈՒԽ 1. Արժեհամակարգի ձևավորումը՝ որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ: Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները----------
3. ԳԼՈՒԽ 3.Արժեհամակարգի ձևավորումը հայոց լեզվի դասերին ----------
4. ԳԼՈՒԽ 4. Հայոց լեզվի և գրականության դերը՝ որպես արժեհամակարգի լիարժեքության ձևավորման միջոց
5. Եզրակացություն----------
6. Օգտագործված գրականության ցանկ ----------

Գորիս - 2023

Ներածություն

Կրթության գլխավոր նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշների՝ հանդուրժողականության և կարեկցանքի, ապրումակցման ու բարության, ներողամտության ու մարդասիրության ձևավորումը, ինչպես նաև սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումն ապահովելը, նրանց մոտ պատշաճ վարք և վարվելակերպ արմատավորելը:

Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Պատահական չէ, որ ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է մեր ժամանակներում ապրող մարդու մտածելակերպի ու գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա, ու մարդը, ոչ միայն այդ գործընթացների ակամա մասնակիցն է պարզապես դառնում, այլև այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը:

Կրթական միջավայրի և կրթության բովանդակության **արդիականացման անհրաժեշտությունը** պահանջում է նաև ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների **արդիականացում**, այսինքն՝ այդ մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Հետազոտական աշխատանքի **նպատակները՝**

1. Ներկայացնել, թե ինչպես են սովորողների մեջ ձևավորվում և զարգանում արժեքային համակարգի հոգեկան, ճշմարտային, բարոյական, գեղագիտական, ազգային և այլ արժեքներ, օրինակ, հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում:
2. Կատարել սովորողների մեջ արժեհամակարգի, հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորման ուսումնասիրություն:
3. Ներկայացնել՝ կրթական տարբեր աստիճաններում սովորողների մեջ ինչպես ձևավորել աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ՝ սեփական դիտարկումների ու կրթական փորձի վրա հենվելով:

Հետազոտական աշխատանքի **խնդիրները՝**

1. Ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը:

2. Բացահայտել արժեհամակարգի, հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորման ուղիներն ու միջոցները, դրանց բովանդակությունը և դերը հայոց լեզվի և գրականության դասավանդման համատեքստում:

3. Առաջարկել նորարարական մեթոդներ՝ հայոց լեզվի և գրականության դասերի ընթացքում սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը արդյունավետ կերպով իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ 1.

Արժեհամակարգի ձևավորումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ: Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները

<<Արժեքը ուղղակի չեն ստանում, այն պետք է վերապրել,
անցկացնել սեփական հոգու միջով, զգալ ու գիտակցել>>:
Արամ Փախչանյան[1]

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող նպատակներն ու հետաքրքրությունները: Այդ հասարակությանը պատկանող մարդն ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ: Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի առանցքային խնդիրներից մեկն է:

Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է, որը նշանակում է, որ աշակերտներին պետք է օգնել

[1]Արամ Փախչանյան <<Դպրոցը, արժեքները և տարատեսակ <<ազատությունները>>

իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ են ուզում պահպանել: Որպեսզի արժեքների սերմանումը զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ չկրի, և այդ արժեքները՝ ազնվությունը, արդարությունը, տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն, չգունազրկվեն՝ այդպես էլ երեխայի կերպարի մաս չդառնալով, և որպեսզի անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը չտրվի միայն առաջինին, երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հեռուստատեսությունը, կինոն, թատրոնը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա՝ ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուրներ, այլև որպես որոշակի հատկանիշների կրողներ, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների մեջ ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով նաև համամարդկային արժեքները, որոնց համադրմամբ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում՝ իբրև ստեղծագործող անհատականություն:

Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոններից են.

ա. **ավանդական** միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ հայացքների, հասարակության հետ իր հարաբերության, սեփական անձի հանդեպ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն ադ միջոցների յուրացումը լինում է երբեմն չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Ինչպես իրավացիորեն գրում է է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»: [2]

[2]Մ. Մոնտեն «Փորձեր» 2016:

բ. **տարիքային**, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների՝ դրսևորվելով աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում, նաև մշակույթի որոշակի շերտերի ու ձևերի նկատմամբ հակման մեջ: Այստեղ ամենակարևորը մեր կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումն է:

գ. միջանձնային, երբ սովորողները շփվում են իրենց կողմից <<ընդունվող>>, իբրև օրինակ գիտակցվող մարդկանց հետ (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական մոդելներ: Ու որպեսզի բացասական մոդելները շատ ավելի արագ չձևավորվեն՝ անդառնալի ավերիչ ազդեցություն թողնելով սովորողի անձի արժեքային համակարգի վրա, շատ կարևոր է, որ աշակերտների այսօրինակ վերափոխումը ոչ միայն աչալրջորեն վերահսկվի ուսուցչի կողմից, այլև, ըստ անհրաժեշտության, ուսումնադաստիարակչական գործընթացի, առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանի քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ տեսակի գիտելիքներ ու վերաբերմունք՝ այս ճանապարհով միջամտելով աշակերտի և նրա կողմից անվերապահորեն ընդունվող մարդու հարաբերություններին:

Արժեքները վերածվում են իմաստների, <<վերակառուցում>> աշակերտի հույզերն ու ապրումները, վերաձևում նախկինում նրա կողմից ընդունված-հաստատված ճշմարտությունները, հարստացնում նրա կյանքը, որը, սակայն, ոչ միշտ է հարթ ընթանում. խոչընդոտների՝ հուսախաբությունների ու կորուստների, փորձությունների վայրէջքների, որոնց հաղթահարումն է միայն, որ երջանկացնում է աշակերտին և բերում արժեքների ձևավորման: <<Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը>>: [3]

---

[3]Արամ Փախչանյան <<Դպրոցը, արժեքները և տարատեսակ <<ազատությունները>>

Դեռահասության տարիքում է (մասնագետների մեծամասնության կարծիքով՝ 12-16 տարեկանում) ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը: Այս շրջանում է աշակերտը սկսում ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում ազատվել ավագների ազդեցությունից, փորձում հարմարվել իր միջավայրում և այդ միջավայրի կողմից ընդունելի նորմերին, փորձում հաստատվել հասակակիցների շրջանում:

Դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է հենց այսօր նրան ներարկել առողջ արժեքներ և ապագա հասարակության համար պատրաստել հայրենասեր, քաղաքակիրթ ու բարեկիրթ, մարդասեր ու ներողամիտ քաղաքացիներ:

Այսպիսով, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել հինգ խմբով. արժեքը՝ ա. որպես **պատկերացում,** բ. որպես **դիրքորոշում**, գ. որպես **պահանջմունք** կամ **շարժառիթ**, դ. որպես **իմաստ** և ե. որպես **հասարակության կենսագործունեության արդյունք**:

ԳԼՈՒԽ 3

Արժեհամակարգի ձևավորումը հայոց լեզվի դասերին

<<...Երկրի վրա ինչ որ լինում է՝ լինում է նախ խոսքի մեջ>>:

Հրանտ Մաթևոսյան [4]

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների, այս դեպքում՝ հայոց լեզվի և գրականության դերը:

Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները, որոնք դրսևորվում են դպրոցում հայոց լեզվի ուսուցման գործառույթներում և նպատակներում: Լեզվի բոլոր հիմնական գործառույթներն էլ (հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, ներազդման, իմաստային, մտքերի ձևավորման ու արտահայտման և այլն) ընձեռում են աշակերտներին որոշակի արժեքային համակարգով օժտելու հնարավորություն:

---

[4] Հրանտ Մաթևոսյան <<Սպիտակ թղթի առջև>>, Հայագիտակ Երևան, 2004 էջ՝ 29

-Այսպես, **հաղորդակցական** գործառույթը ենթադրում է խոսքային հաղորդակցում, որի արժեքային կողմը բնութագրում է մարդու՝ այլոց հետ համակեցության, հանրության մեջ դրսևորվելու, մարդկանց հետ շփվելու պահանջմունքը: Այս պարագայում հատուկ նշանակություն են ձեռք բերում խոսքային հաղորդակցման մշակույթը, լեզվական միջոցներով զրուցակցի վրա ներգործելու ունակությունը, նրա նկատմամբ դրսևորած բարեհաճ ու քաղաքավարի, հարգալից ու մարդասիրական վերաբերմունքը: Այսինքն՝ քաղաքավարությունն ու բարեկրթությունը՝ որպես արժեքային հասկացություններ, բնութագրում են անձի՝ շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից հարաբերություններ ձևավավորելու ձգտումը: Քաղաքավարությունն ու բարեկիրթ վերաբերմունքը դրսևորվում են խոսքային հաղորդակցման մշակույթի, հարգալից դիմելաձևերի, ինչպես Հրանտ Մաթևոսյանն է ասում, **<<ամենից անհրաժեշտ բառերի>>** գործածման միջոցով: Իմ դասերին ինքս մեծ ուշադրություն եմ դարձնում երեխաների բառապաշարին, նրանց բառընտրությանը՝ դասը պատմելիս, միմյանց հետ երկխոսության միջոցով հաղորդակցվելիս, հարց ու պատասխանի ժամանակ, գրավոր և բանավոր խոսք կազմելիս. կարծում եմ՝ իր տարիքային հնարավորություններին համարժեք երեխան էլ պիտի հասկանա բառի տարողությունն ու ծավալը, ենթաիմաստները, ամենակարևորը, բառի մեջ դրված իր իսկ **վերաբերմունքը**, իր **դիրքորոշումը:**

-Տեղեկատվական գործառույթի տեսանկյունից լեզուն դիտարկվում է որպես հաղորդման, մարդկության փորձի ու իմացության, գիտակցված գործունեության ընթացքում կուտակված գիտելիքների համակարգման ու լեզվական ձևակերպման միջոց:

-**Ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման** գործառույթն իրականացնում է ժամանակների միջև կապը, որը հնարավորություն է ընձեռում լեզվի ու գրականության մեջ պահպանել ազգային մշակույթը և փոխանցել սերնդեսերունդ: Այն դրսևորվում է սոցիալական, իմացական, գեղագիտական արժեքների ձևով: Քանի որ, մեծ գրողի՝ Հրանտ Մաթևոսյանի ձևակերպմամբ, <<Ժամանակը նույնքան առարկայական է, ինչքան առարկայական է ողջ աշխարհը>>: Ու <<Երբ դարասկզբի կերպարը դնում ես այսօրվա կերպարի կողքին՝ պարզվում է, որ ժամանակը առարկայական է շոշափելիորեն, ինչպես այս ծառը, այս արտը, այս հայրենիքը, որոնցից կարելի է հեռանալ, որոնց կարելի է մոտենալ>>: [5]

-Խոսքային ներգործության գործառույթը ենթադրում է որևէ մեկին որոշակի արարքի մղելու խնդրանք, հորդոր, հրաման, դրդում: Այսինքն՝ այն արտահայտում է խոսողի կամային վերաբերմունքը: Այս գործառույթը ենթադրում է, որ սոցիալական միջավայրը ընկալվում է որպես արժեք:

---

[5] Հրանտ Մաթևոսյան <<Սպիտակ թղթի առջև>> էջ՝ 165 Հայագիտակ Երևան, 2004

-**Մտքերի ձևակերպման և արտահայտման** գործառույթը նշանակում է, որ ցանկացած միտք հնչյունային թաղանթ և արտահայտություն է ստանում: Այս գործառույթի իրականացումը ենթադրում է իմացական մտածողությունը, մտքերը ձևակերպելու և արտահայտելու կարողությունը և գեղագիտական մտքերի գեղեցիկ և ներդաշնակ ձևակերպումը՝ որպես արժեք, արժեքներին հաղորդակցում:

- **Անձի վարքում դրսևորվող լեզվի կարգավորիչ** գործառույթն արտահայտում է նախատեսվող գործողությունների հաջորդական իրականացումը, մարդու կենցաղի և բարոյական հարաբերությունների, ինչպես նաև մարդկային փոխհարաբերությունների կազմակերպումն ու կարգավորումը: Այն նպաստում է բարոյական արժեքների յուրացմանը:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ դպրոցական ուսուցման համակարգում ուսումնական առարկաների գործառույթները միավորվում են որոշակի նպատակներով: Լեզուն յուրացնել, նշանակում է դպրոցում ապահովել իմացություն հետևյալ ոլորտներում՝ 1. **լսել** 2. **կարդալ** 3. **գրել** 4. **Խոսել,** 5. **հաղորդակցվել** :

Լեզվական իմացությունը ենթադրում է լեզվի համակարգի, քերականական նյութի տիրապետում և նշանակում է տվյալ լեզվի բառապաշարի, լեզվական և դարձվածքային միավորների իմացություն, բառակազմական ձևաբանական, շարահյուսական, ոճական, գրականագիտական գիտելիքների ձեռքբերում, լեզվի քերականության յուրացում: **Հաղորդակցական իրազեկությունը** ենթադրում է խոսքային գործունեության բոլոր տեսակների, ձևավորում և հաղորդակցական մշակույթի տիրապետում, որոնք էլ հենց ընկալվում են իբրև երեխաների հաղորդակցում սոցիալական արժեքներին:

ԳԼՈՒԽ 4

Գրականությունը՝ որպես արժեհամակարգի ձևավորման միջոց

<<… Գրականությունը փնտրում է Աստծու մարդուն: Փնտրում է … չաղավաղված մարդուն ու չաղավաղված փոխհարաբերությունները…>>:

Հրանտ Մաթևոսյան [6]

Անհերքելի է հայոց լեզվի և գրականության ուսումնասիրման գործընթացում գրական-գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման նշանակությունը և կարևորությունը: Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով: Ուստի շատ կարևոր է

[6] Հրանտ Մաթևոսյան <<Սպիտակ թղթի առջև>> էջ՝ 43 Հայագիտակ Երևան, 2004

առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների արարքների ու դրանց դրդապատճառների վերլուծությանը և դրանց միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: 7-րդ դասարանի գրականության նոր դասագրքի հեղինակներ Արքմենիկ Նիկողոսյանի և Արսեն Վարդանյանի կարծիքով <<Դասագիրքը ոչ թե սոսկ ընթերցարան կամ տեղեկատու է, այլ աշխատանքային գիրք՝ հագեցած գործնական հարցերով և առաջադրանքներով: Լուսանկարները, գեղանկարները, լրացուցիչ նյութերը միտված են մատուցվող նյութն ավելի հետաքրքիր, գրավիչ ու տպավորիչ դարձնելուն, գրողի կյանքին առնչվող տեղավայրերի, մարդկանց մասին ավելի ընդգրկուն տեղեկություն տալուն>>: [7]

Դասագրքի հեղինակները կարևորում են թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի դերը: Հատկապես աշակերտի դերը: Նա պետք է հնարավորություն ունենա ազատորեն արտահայտելու իր կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իր համար բացահայտելու այս կամ այն արժեքը, այսինքն՝ գրողի գրածում, ինչպես Հրանտ Մաթևոսյանն է ասում, <<…բացելու ի՛ր լույսը, արձակելու ի՛ր ձգտումը>>,[8] և, ինչպես Համո Սահյանն է ձևակերպում, այդ գրածում <<ճանաչելու իրեն>>/:[9]

Սակայն արժեքը պետք է ձևավորել՝ ոչ թե աշակերտին այն քարոզելով, այլ կիրառելով՝ նրան հնարավորություն տալով այն ձեռք բերել իր իսկ փորձառության հիման վրա: Այսինքն՝ որպեսզի 7-րդ դասարանի աշակերտը հասկանա Ե. Չարենցի <<Ես իմ անուշ Հայաստանի>> կամ <<Հայրենիքում>> բանաստեղծության գեղարվեստական, գեղագիտական, հուզական կամ հայրենասիրական արժեքը, պիտի կարողանա ինքնուրույն առանձնացնել ու դասակարգել բոլոր այն բառերը կամ բառակապակցությունները, որոնք ունեն այդ հատկանիշները և ինքնուրույն բացահայտելով դրանք՝ ընդհանրացումներ անել. ասենք, մեկնաբանել բանաստեղծության վերնագիրը, բացահայտել գաղափարը, ցույց տալ բառերի փոխաբերական իմաստները կամ նախորդ դասարաններում ստացած գրականագիտական պարզ գիտելիքները կիրառել տեքստից դուրս շատ սովորական իմաստներ պարունակող բառերի **/բուք**, **բառ**, **լացակումած, մուգ**, **լիճ**, **որբ**, **հեռու**, **իրիկնամուտ, մութ**/ հուզական երանգավորումներն ու գեղագիտական արժեքը հասկանալու համար՝ դրանք դիտարկելով չարենցյան բառակապակցություններում՝ **վիշապաձայն բուք**, **մուգ երկինք**, **արևահամ բառ**, **լացակումած լար**, **լուսե լիճ**, **որբ Հայաստան** կամ **լճի մրմունջ**, **թափանցիկ հեռու, հին կարոտ**, **աստղային մութ**, **կարոտի**

---

[7] Գրականություն 7: Մեթոդական ուղեցույց Ա. Նիկողոսյան, Ա. Վարդանյան.– Երևան: Անտարես, 2023

[8] Հրանտ Մաթևոսյան <<Սպիտակ թղթի առջև>> էջ՝ 29

[9] Համո Սահյան <<Զրույցներ բանաստեղծի հետ>>, էջ՝ 45-46:

իրիկնամուտ և այլն/։ Դրա համար, անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր, որոնք համապատասխանում են երեխաների տարիքին։ Շատ կարևոր է նաև խրախուսանքը։ Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել, մղել որոշակի գործողությունների, ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ձևավորմանը և ամրապնդմանը։

21-րդ դարի դպրոցում, անշուշտ, առարկայական ծրագրով և առարկայական չափորոշիչներով պայմանավորված, գրականության դասին պետք է կարևորվեն ու զարգացվեն և՛ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները, և՛ մեր բազմամյա փորձով արդեն հաստատված հմտություններն ու կարողությունները՝ տեքստի արտահայտիչ ընթերցանություն, լեզվառճական առանձնահատկությունների ընկալում, համադրելու, զուգադրելու, համեմատելու, հակադրելու և սեփական կարծիքն ու դիրքորոշումը հասկանալի, հիմնավորված և անկաշկանդ ներկայացնելու, տեքստի վրա աշխատելու, դասանյութից անհրաժեշտ մեջբերումներ անելու, վերլուծելու, այս կամ այն արարքը կամ երևույթը մերժել-հաստատելու հմտություն և գրական երկը տարբեր կողմերից դիտարկելու, կերպարները բնութագրելու, բանավոր և գրավոր եղանակով որևէ թեմա ներկայացնելու կարողություն։

Կարևոր է նաև միջառարկայական կապերի ընկալումը, նույն երևույթը, թեման տարբեր տեսանկյուններից զննելու կարողությունը։ Այս դեպքում կարելի է ձևավորել և զարգացնել նաև աշակերտի ինքնակազմակերպման և ինքնակառավարման հմտությունները կամ կարողունակությունները՝ իր աշխատանքը ինքնուրույն պլանավորելու և կատարելու, թաքնված հնարավորությունները բացահայտելու, լեզվական գրագիտություն ունենալու, սովորել սովորելու, ինքնաճանաչողական ու սոցիալական, ինքնագնահատման ու փոխադարձ գնահատման, քաղաքացիական դիրքորոշում ունենալու և այլն։ <<Ես իմ անուշ Հայաստանին>> կարդալիս կամ արտասանելիս աշակերտը զուգահեռ պետք է դիտի նաև Հայաստանի բնությունը պատկերող սարյանական կտավները, պիտի լսի կամ երգի <<Ես իմ անուշը…>>, պիտի կարդա Վ. Սարոյանի կարծիքը բանաստեղծության մասին, որտեղ Սարոյանը բանաստեղծությունը համարում է <<Հայր մերին նման աղոթք մը>>։ Այսպես դասին կապահովվի և՛ ներառարկայական կապը՝ Ե. Չարենց-Վ. Սարոյան, բանաստեղծության վերլուծման միջոցով նաև՝ Նարեկացի-Քուչակ-Ե. Չարենց կապը, ինչպես նաև միջառարկայական՝ գրականություն-երաժշտություն, գրականություն-կերպարվեստ, գրականություն-ֆիզիկա /<<Հայրենիքում>>/ կապերը։ Միայն մեկ բանաստեղծության ուսումնասիրման միջոցով դասին հնարավոր է զարգացնել աշակերտի՝ և՛ ժողովրդագրական ու քաղաքացիական կարողունակությունը, եթե նրանք խմբերով կամ զույգերով աշխատեն, և՛սովորել սովորելու, և՛ ինքնաճանաչողական ու սոցիալական, և՛

տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու, դրանք գործածելու /օրինակ, դասերի ժամանակ համակարգչային ցուցադրություններ կազմակերպելով կամ սահիկաշար պատրաստելով/, և՛ լեզվական գրագիտության ու մշակութային /ֆիլմերի դիտում-քննարկումներ, երաժշտության ունկնդրում, գեղանկարների ցուցադրում՝ գրականությունը համադրելով արվեստի այլ ճյուղերի հետ/ կարողունակությունները:

Երեխաների մեջ արժեքային համակարգ ու գեղեցիկի զգացողություն են ձևավորում նաև սահուն և արտահայտիչ ընթերցանությունը, ասմունքի, ընթերցանության մրցույթները: Առհասարակ, **Գեղեցիկը, ըստ Ս. Ի. Օժեգովի, մարմնավորում է այն** ամենը, ինչը գեղագիտական վայելք է պարգևում: Գեղագիտական օրենքներին համապատասխանությունը դրսևորվում է ներդաշնակության մեջ. <<Լեզվում ներդաշնակությունն արտահայտվում է գրականության, հատկապես բանահյուսության մեջ>>:[10]

Հայոց լեզվի և գրականության ուսուցումն է հատկապես, որ դպրոցում ապահովում է աշակերտի մեջ արժեքային համակարգի ոչ միայն ձևավորումը, այլև նրա կողմից բարոյական անժխտելի արժեքների՝ հայրենասիրության ու ազգասիրության, բնության հանդեպ հոգատարության ու բնապահպանության, մարդասիրության ու բարության, ներողամտության ու հանդուրժողականության կարևորումն ու արժևորումը:

Աշակերտին, բնապաշտություն ու բնապահպանության ձգտում կարող ենք սերմանել և՛ Բակունցի, և՛ Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունները. <<Կյանքը գնում է իր ճանապարհով, և մնում է գրականության բնապաշտական թեքումը>> [11], այսինքն՝ <<…միայն մարդկային հայացքը բնությանն ու աշխարհին>>,-համոզված է Հրանտ Մաթևոսյանը:[12]

Բնությանն ու մարդուն ուղղված այս հայացքով պիտի ուսուցիչն օժտի աշակերտին, որպեսզի 7-րդ դասարանցին և՛ կարողանա անհանգստանալ իր ձագուկի կյանքի համար մաքառող կարմիր պառավ ձիու համար, և՛ չատի բնության կողմից սահմանված օրենքով ու թույլտվությամբ իր ձագերի համար կեր հայթաթող գայլին /<<Կանաչ դաշտը>>/: Իսկ 12-րդ դասարանում բնության հանդեպ պաշտամունք պիտի սերմանեն Համո Սահյանի բանաստեղծությունները, որոնցում, հենց իր՝ բանաստեղծի ձևակերպմամբ, <<Բանաստեղծը ճանաչել է տալիս մարդու մեջ և աշխարհում եղած

---

[10] Սերգեյ Իվանովիչ Օժեգով -<<Մարդ և բառարան>> 1964

[11] Հրանտ Մաթևոսյան <<Սպիտակ թղթի առջև>> էջ՝ 41

[12] Հրանտ Մաթևոսյան <<Սպիտակ թղթի առջև>> էջ՝ 44

գեղեցիկը։ Մարդու մեջ ցույց է տալիս Աստծուն>>։[13] Եվ… քաղաքակրթության բերած կորուստ- <<ձեռքբերումների>> մեջ չի դավաճանում մարդուն։ Ասում է. <<Աստված բնություն է, բնությունը՝ Աստված։ Ասում է, որ ինչպես Աստծու մոտ, այնպես էլ բնության գիրկն է ինքը գնում աղոթքի՝ մաքրագործվելու և ամբողջանալու նպատակով>>։[14]

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են։ Ինչպիսի դաստիարակչական ուժ կունենա իր մեջ, օրինակ, Պ. Սևակի <<Մարդը ափի մեջ>> ժողովածուի ճիշտ ուսուցումը 12-րդ դասարանում, որով ուսուցիչը աշակերտներին օժտում է մարդու խորախորհուրդ, երբեմն անքննելի ու առեղծվածային էությունը <<ափի>> մեջ պեղել-քննել-դիտարկել-գնահատելու այնպիսի կարողությամբ, որն անմիջապես ժխտում-մերժում է մարդու մեջ եղած մերժելին՝ չարությունն ու ագահությունը, քծնողականությունն ու հաճոյանալու հակումը, շահամոլությունն ու անազնվությունը՝ միաժամանակ հաստատելով իր՝ արդեն <<Եղիցի լույս>> ժողովածուի մեջ բանաստեղծի կողմից կարևորվող-հաստատվող **անկեղծ-անսուտը, մաքուր-վսեմը, կարեկցանքի ու բարության ուժը**. արժեքներ, որոնց որոնում-գտնումի խնդիրը ծավալվում-տարածվում է ոչ միայն <<Մարդը ափի մեջ>> և <<Եղիցի լույս>> ժողովածուներում, այլև Պ. Սևակի ամբողջ պոեզիայում։ Բայց աշակերտին սևակյան արժեքներով դաստիարակելու ուսուցչի հնարավորությունները ավելի են մեծանում, երբ նա այդ խնդիրը փորձում է իրականացնել հենց նրա՝ բանաստեղծ-մարդու կերպարի հետազոտման-բացահայտման միջոցով։ 7-րդ դասարանում դա կարելի է անել <<Ծնվել եմ>>, 12-րդ դասարանում՝ <<Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին>> բանաստեղծությամբ։ Վերջին բանաստեղծությունը կարդալ-վերլուծելուց առաջ կարելի է հիշատակել Պ.Սևակի <<Մարդը ափի մեջ>> ժողովածուից դուրս, սակայն նույնանուն գրքում զետեղված և նույն շարքին հոգեհարազատ <<Որդուս>> բանաստեղծությունը, որտեղ Սևակը որդուն պատգամում է կյանքում չընտրել **անխոչընդո՛տ և անարգելք, քանոնի պես հա՛րթ ու ուղիղ, հարթ խճուղու նման կյանքը,** պատգամում է՝ **գերադասել ճամփա՛ շինել**, ոչ թե **ասֆալտ ճամփով քայլել,** պատգամում է **ազնիվ լինել ամեն ինչում։**

Չէ՞ որ Սևակի՝ որդուն ուղղված պատգամը նախ և առաջ հենց իր անձին է վերաբերում, որը համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին առաջադրանք է տալիս հաշվել, <<…թե

---

[13] <<Խոսում է Համո Սահյանը>>, Զրույցներ, կազմող Հ. Հովնաթան, երևան, <<Վարք>> հրատարակչություն, 1992, էջ՝ 88

[14] <<Խոսում է Համո Սահյանը>>, Զրույցներ, կազմող Հ. Հովնաթան, երևան, <<Վարք>> հրատարակչություն, 1992, էջ՝ 88 ։

այդ ի՞նչ ձևով, ի՞նչ մեքենայի օգնությամբ բարի դեռ կարելի է մարդուն **մա՛րդ** պահել և կամ նոր միայն մարդուն դարձնել **Մարդ>>**:[15]

Հենց գրողի մարդկային կերպարի վերլուծությամբ կամ նրա ճակատագիրն ու բախտը միահյուսելով նրա ստեղծած կերպարների կենսափիլիսոփայությանն ու դավանած արժեքներին՝ կարելի է <<ուսուցանել>> **հայրենասիրություն**:

Օրինակ, 11-րդ դասարանում Ա. Բակունցի <<Ծիրանի փողը>> պատմվածքն անցնելիս պետք է անպայման հիշատակել նաև<<Լառ Մարգարը>>: 11-րդ դասարանի աշակերտը պետք է անպայման իմանա, որ 1930-ականներին Բակունցը գրականություն բերեց հայրենազուրկ մարդու՝ հայրենիքի հանդեպ կարոտի, հայրենաբաղձության թեման, որն այդ ժամանակների համար անիրական սխրանք էր, և որի համար գրողն իր կյանքով հատուցեց: Թե՛ <<Ծիրանի փողը>> և թե՛ <<Լառ Մարգար>> պատմվածքներում <<Ա. Բակունցը դարձավ կորուսյալ հայրենիքի տանջալից կարոտի մեծ երգիչը:>>:[16] 11-րդ դասարանցին պետք է հասկանա, որ թե՛ Հազրոն, թե՛ Մարգարը հայ ժողովրդի տոկունության, անընկճելիության մարմնավորումն են, ստեղծագործ ու աշխատասեր, պարզ ու շիտակ հայ ժողովրդի ուժի արտահայտությունը: Պատմվածքը վերլուծելիս կարելի է հիշել մի պատմություն. <<Գերմանացի ճանապարհորդ ու բնագետ Մորից Վագները Մասիսի կատարամերձ Ակոռի գյուղի երկրաշարժից 3 տարի անց /այն եղել է 1840թ. հուլիսի 20-ին/ ՝ 1943թ., Խ. Աբովյանի հետ բարձրանում է Ակոռի: Երկրաշարժն Ակոռիից ոչ մի հետք չէր թողել, բայց ահա գյուղի հռչակավոր այգին կանգուն էր մնացել… 13 ծիրանենի: <<Այսպիսի հրաշք կարող է միայն հայոց աշխարհում լինել,- զարմացած բացականչել է Վագները…>>: Ուրեմն ծիրանը հայկական երկրի խորհրդանիշն է: Խորհուրդ ունի նաև 13 թիվը, որ հավաստում է, թե ոչ մի պատահականություն, անգամ հզոր երկրաշարժը չի կարող աշխարհի երեսից վերացնել հայ ժողովրդին…>>:[17]

Արդիականացնելով պատմվածքի գաղափարը՝ աշակերտը կհասկանա նաև, որ ա փորձությունը, որի միջով այսօր կրկին անցնում է մեր ժողովուրդը, շատ նման է 1915 թ. մեր ժողովրդի ապրած ողբերգությանը և հայրենազուրկ Հազրոյի կամ Լառ Մարգարի կերպարներում կփնտրի-կընդգծի մեր ժողովրդին հատուկ ամենակարևոր հատկանիշը՝ լավատեսությունը. <<Էսօր դուման է , վաղը արև կծագի>>: Բայց պիտի հասկանա նաև, որ արևն այս դեպքում ինքն իրեն չի ծագելու, ու նաև ինքը, հենց ինքը իր գործով, իր

---

[15]Պ. Սևակ(<<Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին>>):

[16]<<Հայոց լեզու և գրականություն>> ամսագիր, հ. 1 2013թ. էջ՝ 45-46

[17]<<Հանրագիտակ օրացույց>>

դավանած արժեքներով պիտի կերտի մեր վաղվա օրը, պիտի օգնի, որ վաղվա մեր լուսաբացը իսկապես արևոտ լինի, կենսառատ ու խոստումնառատ: Օրինակներ շատ կարելի է բերել, որովհետև հայ կամ, ընդհանրապես, գրականության դասընթացում ընդգրկված ամենափոքրիկ /ծավալով փոքրիկ/ բանաստեղծությունն անգամ, օրինակ, Հովհաննես Թումանյանի քառյակները/ իր մեջ պարունակում է բարոյական, ազգային, մարդկային ու համամարդկային արժեքների այն համախումբը, որով պետք է սնել ու դաստիարակել հայ մանուկին, վաղվա հայ քաղաքացուն:

Եզրակացություն

Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, իսկ ազգի հիմքը կրթությունն է, և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Մանկավարժը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Ահա թե ինչու հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման և ապահովման համար Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը սովորողներին պետք է փոխանցեր գիտելիքներ, կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեին ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով՝ պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը: Քսաներորդ դարավերջի և քսանմեկերորդ դարասկզբի քաղաքացին հասկանում էր, որ այն երկիրն է հավակնում ունենալ լավ կրթական համակարգ, որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտության ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին: Դրանք են՝

-լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի

-դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն:

Այս պատճառով էլ յուրաքանչյուր ուսուցչի առջև ծառանում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Որպեսզի ուսումնական որևէ առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ: Համաշխարհայնացման պայմաններում մենք անպայման պետք է հաշվի առնենք նաև եվրոպական առանցքային կոմպետենցիաները՝ բայց միշտ հիշելով, որ մեր խնդիրն է ստեղծել հենց հայ մարդ, հայ քաղաքացի, որն ապրում է քսանմեկերորդ դարում:

Այսպիսով, հայոց լեզվի և գրականության դասերի ուսուցման ընթացքում սովորողների մոտ առարկայական չափորոշչով նախատեսված գիտելիքների, կարողունակությունների և հմտությունների հետ մեկտեղ, ձևավորվում են հետևյալ արժեքային վերջնարդյունքները.

- Սովորողը յուրացնում է լեզուն՝ ձեռք բերելով 1. **լսելու,** 2. **կարդալու,** 3. **գրելու,** 4. **խոսելու,** 5. **հաղորդակցվելու** կարողություն:

- գիտակցում է հումանիտար և մասնավորապես հայոց լեզվի և գրականության դասերին ստացած գիտելիքների կարևորությունը, դրանց նշանակությունը մարդկային ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորման մեջ,

-կարևորում է գրավոր և բանավոր խոսքի ոչ միայն հստակությունը, ճշգրտությունը, հակիրճությունը, մատչելիությունը, այլև հուզական-գեղագիտական, մշակութային արժեքը,

-ձեռք է բերում հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, ներազդման, մտքերի ներդաշնակ ձևավորման ու արտահայտման, բանավոր և գրավոր եղանակով որևէ թեմա ներկայացնելու կարողություն՝ դրանք դիտելով որպես արժեք:

- ակտիվորեն վերաիմաստավորում է իր նախկին մոտեցումները, փորձում ազատվել ավագների ազդեցությունից, հարմարվել իր միջավայրում և այդ միջավայրի կողմից ընդունելի նորմերին, հաստատվել հասակակիցների շրջանում:

-կարողանում է արտահայտիչ կարդալ տեքստը, ընկալել տեքստի լեզվաոճական առանձնահատկությունները, դասանյութից անհրաժեշտ մեջբերումներ անել, դիտարկել գրական երկը տարբեր կողմերից

-ձեռք է բերում համադրելու, զուգադրելու, համեմատելու, հակադրելու և սեփական կարծիքն ու դիրքորոշումը հասկանալի, հիմնավորված և անկաշկանդ ներկայացնելու,

տեքստի վրա աշխատելու, այս կամ այն արարքը կամ երևույթը վերլուծելու, մերժել-հաստատելու, կերպարները բնութագրելու կարողություն:

-գնահատում է ճշմարտությունը, արդարությունը, արժանապատվությունը, ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը ցուցաբերում է դրանք պաշտպանելու վարքագիծ, ունենում է անկանխակալ տեսակետ հայտնելու պատասխանատվություն,

-գնահատում է ստեղծագործական երևակայությունը, ձգտում է կապեր հաստատել երևակայական պատկերացումների և իրականության միջև, առօրյա կյանքում մերժում է գորշ իրապաշտությունը,

-կարևորում է իրատեսական նպատակներ և խնդիրներ դնելը, բարեխիղճ և կենտրոնացած աշխատանքը, ձգտում է նպատակին հասնելու համար գործադրել թույլատրելի միջոցներ:

Գրականության ցանկ

1. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ:

2. Հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը

3. Մ. Մոնտեն «Փորձեր» 2016:

4. Սերգեյ Իվանովիչ Օժեգով - <<Մարդ և բառարան>> 1964:

5.Արամ Փախչանյան <<Դպրոցը, արժեքները և տարատեսակ <<ազատությունները>>

6. <<Հայոց լեզու և գրականություն>> ամսագիր, հ. 1 2013

7. <<Հանրագիտակ օրացույց>>

8. Պ Սևակ, հ.1 Երևան-1982թ

9. <<Խոսում է Համո Սահյանը>>, Զրույցներ, կազմող Հ. Հովնաթան, երևան, <<Վարք>> հրատարակչություն, 1992

10. Հրանտ Մաթևոսյան <<Սպիտակ թղթի առջև>> , Հայագիտակ Երևան-2004

11.Համո Սահյան <<Զրույցներ բանաստեղծի հետ>>

12. Գրականություն 7: Մեթոդական ուղեցույց Ա. Նիկողոսյան, Ա. Վարդանյան.– Երևան: Անտարես, 2023